ԿՅԱՆՔ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱՅԻՆ

(ՊՐՈՖ. Գ. Մ. ԵՂՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Այս տարվա հոկտեմբեր ամսին կլրանա Երևանի բժշկական ինստիտուտի վիրաբուժական ստոմատոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Գևորգ Մարուքի Եղյանի ծննդյան յոթանասուն և աշխատանքային գործունեության 43-ամյակը:

Ավելի քան 43 տարի է, ինչ նա բոլորանվեր ծառայում է բժշկական գիտությանը, վերջինիս ի սպաս դնելով իր ըստեղծագործական ամբողջ կարողությունները, ուժն ու եռանդը, իր բազմակողմանի գիտելիքներն ու կուտակած հարուստ փորձը:

— Անհոգ մանկություն չեմ ունեցել: Դժվարություններ, իհարկե, եղել են, բայց միշտ մտածել եմ, որ չպետք է վախենալ ոչ մի դժվարությունից, այլ հաղթահարել:

Գ. Մ. Եղյանը ծնվել է 1914 թվականին Թուրքիայի Զոռլու քաղաքում, բանվորի ընտանիքում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել են Բուլգարիա: Ավարտելով Սոֆիայի բժշկական ինստիտուտը՝ նա անմիջապես աշխատանքի է անցել նույն ինստիտուտի ընդհանուր վիրաբուժության ամբիոնում որպես ասիստենտ: Ներգաղթից հետո աշխատել է Երևանում որպես վիրաբուժական բաժանմունքի վարիչ, այնուհետև օրթոպեդիկ ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտական աշխատող:

Վրա հասած պատերազմը խաթարում է Գ. Եղյանի խաղաղ ստեղծագործական աշխատանքը: Նա մեկնում է ռազմաճակատ:

1953 թվականին Գ. Եղյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա և ստանում բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան: 1956թ.-մասնակցությամբ տպագրվել են ստոմատոլոգիայի՝ մայրենի լեզվով առաջին դասագիրքը («Վիրաբուժական ստոմատոլոգիա»), Հայաստանի ստոմատոլոգների առաջին և երկրորդ համագումարների նյութերը: Նա մասնակցել է երեք միջազգային գիտական համաժողովների, որոնցից մեկը՝ Բուլգարիայում, մյուսը՝ Բուխարեստում, իսկ երրորդը՝ Հոլանդիայում: Բժիշկն ակտիվ մասնակցության համար պարգևատրվել է պատվոգրերով և հուշամեդալներով: Աշխատանքային գործունեությանը զուգընթաց պրոֆեսոր Գ. Եղյանը մեծ ծառայություններ ունի նաև գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Նա ավելի քան 60 գիտական աշխատանքների ու հոդվածների հեղինակ է, որոնք տպագրվել են ինչպես հանրապետական ու միութենական, այնպես էլ արտասահմանյան մամուլում: Մեծ է նրա վաստակը նաև գիտական կադրերի պատրաստման և նրանց որակավորման բարձրացման գործում: Անվանի բժշկի ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ:

Հասարակական աշխատանքը նույնպես Գ. Եղյանի տարերքն է: Նա երկար տարիներ եղել է հանրապետության ստոմատոլոգների գիտական-բուժական ընկերության նախագահ, ընտրվել է ստոմատոլոգների համամիութենական ընկերության նախագահության կազմում, իսկ ներկայումս նույն ընկերության պատվավոր անդամ է:

Գիտամանկավարժական աշխատանքի բազմամյա գործունեության, բժշկական ինստի-